Ուրեմն վերջին տարիների ընթացքում աշակերտների մեծագոյն մասը սովորում է եղել փոքր դասարաններում (մինչև III դաս.), այն է, սկսած 1903—904 ուս. տ. մինչև ներկայ ուս. տարին բոլոր 4 ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ աշակերտների թիւը (սկսած III-ից մինչև VI գ.) տարւայ սկզբին 82 (1903—904) չի անցել, որ կազմումէ աշակերտների ընդհանուր թւի 19%, իսկ տարւայ վերջը նոյն իսկ աւելի քիչ։ Եղել են տարիներ, երբ 4 բարձր դասարանների աշակերտների թիւը կազմել է ընդհանուր թւի միմիայն 13%, ասել է թէ՝ թեմական դպրոցը լոկ անունով է եղել միջնակարգ դպրոց, նա աւելի շուտ եղել է ծխական երկդասեան, քան թէ միջնակարգ։ Ներկայ ուսումն. տարում այդ դասարանների աշակերտների թիւը հասաւ տարւայ վերջը 102, որ կազմում է մօտ 29% ընդհ. աշակ. թւի։ Այդ անհամեմատ աւելի բարձր է նախկին տարիների թւից, իսկ ապագայում աւելի ևս կբարձրանայ։ Այդպիսով մի երկու տարուց յետոյ մեր դպրոցի շրջանաւարտների թիւը ևս զգալի կերպով կը բարձրանայ և կարդարացնի հոգաբարձութեան դպրոցի վրայ արած ծախսերը, վերջին տարիների շրջանաւարտներից ամէն մէկի վրայ դպրոցը ծախսել է 2000—2700 րուբլի։

Առաջադիմութեան կողմից ներկայ ուսումնական տարին նոյնպէս բարձր է միւս տարիներից։ Փոխադրուողների ամենաշատ % եղել է այս տարի (61%)։ Եղել են տարիներ, երբ այդ % իջել է մինչև 40-ի (1904—905 թ.), մնացողների թիւն ևս այս տարի համեմատաբար աւելի քիչ է 11%, ամենաբարձր

*եղել է 1904—905 թ. 32⁰/₀, 1905—906 թ. 28⁰/₀։*

*Սակայն վերաքննուողների թիւն այս տարի բաւականին բարձր է 28⁰/₀, նոյնը և անցեալ տարի։ Այդ մասամբ բացատրւում է նրանով, որ III նախակրթարանում այս տարի մենք աշակերտ չենք պահել, այլ բոլոր թոյլերին վերաքննութիւն ենք տուել, որպէս զի հնարաւորութիւն տանք նրանց նախակրթարանները փակելու դէպքում փոխադրուել հետևեալ դասարան և դպրոցից դուրս չմնալ։*

*Աշակերտների որտեղացի լինելը կարելի է տեսնել հետևեալ աղիւսակից։—*



| | Երևան և Նորք | ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳ | | | | | | | Ղազախի գաւառ | Գանձակի նահ. | Թիֆլիսի նահ. | Բաքուի նահ. | Ախալքալաք. | Տաճկաստան. | Պարսկաստան. | Անյայտ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Երև. գաւառ | Ն.-Բայազ. գաւառ | Շարուր-Դարալագեազ | Էջմիածն. գ. | Նախիջ. գ. | Ալէք. գ. | Սուրմալու գ. | | | | | | | | | |
| III ն. հ. | 11+2 ն. | 19 | 1 | 2 | 4 | — | — | — | — | — | — | 1 | — | 2 | — | — | 42 |
| III ն. գ. | 11+3 ն. | 15 | 1 | — | 3 | 4 | 1 | — | — | — | — | — | — | 4 | 1 | 2 | 45 |
| I գ. հ. | 18+1 | 13 | 1 | 1 | 2 | 1 | — | 1 | 1 | — | — | — | — | 1 | — | 2 | 42 |
| I գ. գ. | 12+9 | 18 | — | 1 | 3 | 1 | — | 1 | — | 2 | — | — | — | 3 | 1 | — | 46 |
| II գ. հ. | 9+1 | 14 | 2 | 6 | 4 | 2 | — | 3 | — | — | 1 | — | 1 | 3 | — | — | 46 |
| II գ. գ. | 12+4 | 12 | — | 3 | 2 | — | 1 | 1 | 1 | 2 | — | — | — | 2 | 1 | 4 | 45 |
| III գ. հ. | 4+2 | 9 | — | — | 5 | 1 | — | 2 | 1 | — | — | — | — | — | — | 4 | 28 |
| III գ. գ. | 8 | 3 | 1 | 7 | 2 | — | 2 | — | 1 | — | — | — | — | — | 1 | 1 | 26 |
| IV դաս. | 5+1 | 7 | 1 | — | 6 | — | 1 | 2 | 1 | 2 | — | — | — | 1 | 4 | 2 | 33 |
| V դաս. | 3+1 | 3 | — | — | 1 | 1 | — | 1 | 1 | — | — | — | — | 1 | 2 | 1 | 15 |
| VI դաս. | 4+1 | 1 | — | — | 1 | — | 1 | — | — | 2 | — | — | — | — | — | — | 10 |
| Գումար | 97+19<br>116 | 114 | 7 | 20 | 33 | 10 | 6 | 11 | 6 | 8 | 1 | 1 | 1 | 17 | 10 | 17 | 378 |
| ⁰/₀ | 30⁰/₀ | 30⁰/₀ | 4.9⁰/₀ | 9⁰/₀ | 2.9⁰/₀ | 2.5⁰/₀ | 3⁰/₀ | 2.5⁰/₀ | 2.6⁰/₀ | — | — | 4.4⁰/₀ | 2.9⁰/₀ | 4.4⁰/₀ | — | — | — |

*Ուրեմն մեր աշակերտների մեծագոյն մասը գաւառացիներ են, այն է՝ 58⁰/₀.*

կամ 201 աշակ. որոնցից Երևանի նահանգի աշակ. կազմում են 53°/₀ (առանց Երևան քաղաքի), Երևանից և Նորքից աշակերտների թիւն է 116 կամ 30°/₀. Տաճկաստանցիների թիւն է 17 կամ 4,4°/₀, Պարսկաստանցիներինը 10 կամ 2,9°/₀:

Ըստ ծնողների պարապմունքների աշակերտները բաժանւում են.

| Դասարաններ | Ուրիշ | Անգործներ | Հողագործներ | Այգեգործներ | Արհեստ. (կօշկ., ոսկերիչ, դերձակ, ատաղձագ. և այլն | Բանուորներ, մշակներ, ծառաներ | Մանր և միջակ վաճառակ. | Ծառայողներ, ուսուցիչներ, գրագիրներ | Հոգևորականներ | Անյայտներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| III ն. հ. | 5 | 3 | 7 | 3 | 12 | 4 | 4 | 1 | 1 | 2 |
| III ն. գ. | 7 | 3 | 5 | 3 | 12 | 5 | 4 | 3 | 2 | 1 |
| I գ. հ. | 6 | 5 | 8 | 1 | 14 | 1 | 3 | — | 2 | 2 |
| I գ. գ. | 3 | 3 | 12 | 1 | 4 | 4 | 8 | 3 | 3 | 5 |
| II գ. հ. | 7 | 3 | 13 | 1 | 4 | 1 | 7 | 2 | 4 | 1 |
| II գ. գ. | 1 | 5 | 9 | 2 | 8 | 3 | 8 | 1 | 1 | 7 |
| III գ. հ. | 2 | — | 6 | — | 7 | 1 | 3 | — | 3 | 6 |
| III գ. գ. | 4 | 1 | 7 | — | 6 | — | 2 | — | — | 6 |
| IV դաս. | 4 | 1 | 7 | 1 | 3 | — | 4 | 3 | 4 | 6 |
| V դաս. | 4 | — | 1 | 1 | 2 | — | — | 2 | 2 | 3 |
| VI դաս. | — | 1 | — | — | 4 | — | 2 | — | — | 3 |
| Ընդամէնը | 43 | 24 | 75 | 13 | 74 | 19 | 45 | 15 | 22 | 42 |
| °/₀ | 11,3 | 6,3 | 19,7 | 3,4 | 19,7 | 5 | 11,4 | 3,9 | 6,2 | 11,3 |



Այդպիսով հողագործների, այգեգործների, մշակների որդիները կազմում են 182 հոգի, կամ 50°/₀, որբերի և անգործների զաւակները 67 հոգի կամ 18°/₀, մանր և միջին վաճառականների, ծառայողների, հոգևորականների՝ 82 հոգի կամ 21,5°/₀:

354 աշակերտից թոշակաւոր եղել են 274 հոգի կամ 77°/₀, ձրիները 80 հոգի կամ 23°/₀: Թոշակաւորներից չեն բերել մինչև հիմայ իրանց թոշակը 25, որ կազմում է թոշակառուների 6°/₀: 254 թոշակաւոր աշակերտները պիտի վճարէին 3150 ր., վճարել են 2924 ր., մնում է պակաս 129 ր. կամ 4°/₀: Թոշակները բաժանւած էին 6 կարգի, սկսած 6 ր. մինչև 36 ր. եթէ ընդունելու լինենք, որ 24—36 ր. թոշակ վճարողները համեմատաբար աւելի ունևոր աշակերտներն են եղել դպրոցում, կտեսնենք, որ այդպիսիների թիւը դպրոցում հասել է միմիայն 16-ի, որ կազմում է ընդհ. աշակերտների թւի 4,5°/₀:

## ԳՐԱԴԱՐԱՆ

Դպրոցի տեղափոխութեան պատճառով աշակերտները չկարողացան տարւայ սկզբից օգտուել գրադարանից, բացի այդ գրադարանի հին ցուցակը անկարգ վիճակի մէջ էր, որ օգտուել նրանից ոչ մի հնարաւորութիւն չկար: Այդ պատճառով հէնց տարւայ սկզբին ես ձեռնարկեցի գրադարանը կարգի բերելու: Պատրաստեցի 1) մի ժապաւինեայ մատեան, որտեղ մտցրած են գրադարանում եղած բոլոր գրքերը (ստուգւած հին մատեանով), 2) պատրաստած և

կազմուած են առանձին այբուբենական շարժական ցուցակ թերթերի վրայ (карточка), որոնցով կարելի կըլինի անմիջապէս գտնել գիրքը, 3) բոլոր գրքերը ըստ բովանդակութեան բաժանուել են մի քանի մասերի և մտցուած են առանձին մատեանների մէջ, որպէս զի կարելի լինի որոշ մասնագիտութեան գիրք հեշտութեամբ գտնել։ Բացի այդ բոլոր գրքերը գնահատուած են (շատ գրքերի համար դրուած են միմիայն մօտաւոր գները) և գները մտցուած մայր մատեանի մէջ։

Ցուցակը կազմելուց յետոյ պարզուեց, որ գրադարանում 1907—908 ուս. տ. սկզբին կար։—

| Ինչ տեսակ գրքեր | Գրքերի քանակութիւնը | Գրքերի արժէքը | |
|---|---|---|---|
| | | Ր. | Կ. |
| Հայերէն գրաբար գրքեր | 400 | 394 | 75 |
| ,, աշխարհաբ. գր. | 1921 | 951 | 1 |
| Ռուսերէն գրքեր . . | 1420 | 888 | 29 |
| Բառարաններ . . . | 117 | 336 | 80 |
| Օտար լեզուներով գրքեր | 67 | 34 | 20 |
| Ընդամէնը | 3925 | 2605 | 05 |

Ինչպէս յայտնի է գրադարանի համար այս տարուայ բիւջէի մէջ գումար չըկար յատկացուած, այն ինչ գրադարանում չըկային շատ անհրաժեշտ գրքեր,



որոնց մեծ կարիք էր զգացւում։ Ուսուցչական խումբը գտնէ մասամբ այդ պակասը լրացնելու համար, իր տրամադրութեան տակ եղած գումարներից յատկացրեց գրադարանին 80 ր. և այդ գումարով բերել տուեց հայերէն և ռուսերէն գրքեր։ Բացի այդ դըպրոցի վարչութիւնը գիմեց Պետերբուրգի համալսարանի արևելեան բաժնին և ստացաւ նրանից մի շարք արժէքաւոր հրատարակութիւններ։ Ստացուել են նուէրներ նաև ուրիշ անձնաւորութիւններից ի միջի այլոց և մեր հոգաբարձու Պ. Կանդուրալեանից։ Ընդամէնը գրադարանը 1907—908 թ. ընթացքում հարստացել է

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ռուսերէն գրքեր . . . | 86 կտոր | 121 ր. | 97 կ. |
| Հայերէն գրքեր և նօտաներ | 77 ,, | 120 ,, | 80 ,, |
| Օտար լեզուներով գրքեր | 1 ,, | 1 ,, | 50 ,, |
| Ընդամէնը | 243 ,, | 244 ,, | 27 ,, |

Պարբերական հրատարակութիւններից 1907—908 ուս. տար. ստացուել է.—,,Հասկեր‘‘ (աշակերտների համար), ,,Հանդէս ամսօրեայ‘‘, ,,Բազմավէպ‘‘, ,,Русская школа“, ,,Вѣстникъ воспитанія“, ,,Русское богатство“, ,,Մշակ‘‘, ,,Վտակ‘‘ և ,,Русскія вѣдомости“։

Գրադարանում կան մի շարք գրքեր, որոնք անկազմ ձևալով՝ բոլորովին քրքրուել, փչացել են. այդ գրքերը պիտի հանել ցուցակից։ Մի շարք ուրիշ գրքեր նոյն դրութեան կըհասնեն, եթէ չը կազմուեն։ Աւելի լաւ է այդ գրքերը կազմել տալ ամառը, որպէս զի ուս. տար. սկզբին նրանք պատրաստ լինեն։

1907—908 թ. ընթացքում աշակերտները օգտուել են գրադարանից հետևեալ կերպով։

| Դասարանները | Միջին թիւը կարդ. գրքերի 1906—907 | Միջին թիւը կարդ. գրքերի 1907—908 | Քանի՞ն է կարդացել 1906—907 | Քանի՞ն է կարդացել 1907—908 | Քանի՞ գիրք են կարդացել 1906—907 | Քանի՞ գիրք են կարդացել 1907—908 | Maximum 1906—907 | Maximum 1907—908 | Միջին թիւը 1906—907 | Միջին թիւը 1907—908 | % կարդացողների 1906—907 | % կարդացողների 1907—908 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| III ն. հ. | — | 38 | — | 14 | — | 30 | — | 3 | — | 2 | — | 35 |
| III ն. գ. | — | 42 | — | 25 | — | 85 | — | 6 | — | 3 | — | 58 |
| I գ. հ. | 30 | 40 | 26 | 30 | 195 | 160 | 14 | 13 | 8 | 5 | — | 75 |
| I գ. գ. | 53 | 44 | 44 | 44 | 224 | 334 | 9 | 9 | 5 | 7 | — | 100 |
| II գ. հ. | 60 | 44 | 54 | 38 | 373 | 167 | 18 | 9 | 7 | 4 | — | 86 |
| II գ. գ. | — | 45 | — | 42 | — | 256 | — | 51 | — | 6 | — | 93 |
| III գ. հ. | 20 | 24 | 20 | 24 | 183 | 132 | 20 | 14 | 9 | 6 | 100 | 100 |
| III գ. գ. | — | 26 | — | 25 | — | 227 | — | 16 | — | 9 | — | 100 |
| IV դաս. | 14 | 30 | 11 | 30 | 165 | 420 | 38 | 49 | 15 | 14 | — | 100 |
| V դաս. | 7 | 13 | 7 | 13 | 120 | 298 | 35 | 84 | 17 | 23 | 100 | 100 |
| VI դաս. | 12 | 10 | 12 | 10 | 120 | 80 | 22 | 14 | 10 | 8 | 100 | 100 |
| Ընդամէնը | 196 | 354 | 174 | 298 | 1380 | 2189 | — | — | 9 | 7 | 95 | 83,95 |



Ուսուցչական խումբը նոյնպէս օգտուել է գրադարանից, թէև համեմատաբար փոքր չափով (կան ուսուցիչներ, որոնք բոլորովին չեն օգտուել)։ Պատճառներից մէկը պէտք է համարել դպրոցի գրադարանի աղքատութիւնը, որի շնորհիւ ուսուցիչներից շատերը ստիպուած անհրաժեշտ գրքերը իրանք են բերել ուրիշ տեղերից կամ թէ գնել են։

Գրադարանից օգտուել են 19 ուսուցիչներից 15 հոգի, վերցրել են 155 գիրք, միջին թւով ամեն մի ուսուցիչը 10 գիրք։

## ՖԻԶԻՔԱԿԱՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ։

Դպրոցի ֆիզիքական և այլ կաբինէտներում գործիքները և իրերը շատ անխնամ դրութեան մէջ էին։ Այդ բոլոր եղած գործիքները և իրերը ցուցակագրուած, գնահատուած (մասամբ դպրոցի գործերի հին հաշիւներով և մասամբ մօտաւորապէս) և մտցրւած առանձին ժապաւինեայ մատեանի մէջ։ Բոլոր եղած գործիքները կարգի բերուած, փչացածներից մի քանիսը նորոգուած, իսկ միւսները ցուցակից հանուած և յատուկ պահարաններում դասաւորուած։ Այս տարի ֆիզիքական և այլ կաբինէտները հարստացել են մօտ 400 ր. արժողութիւն ունեցող գործիքներով և իրերով, սակայն այդ կաբինետները դեռ ևս չափազանց աղքատ են և անհրաժեշտ է տարէցտարի նրանց հարստացնել, յատկացնելով ամեն տարի մի որոշ գումար։

Մինչև 1907—908 թ. այդ կաբինէտներում եղել են. ֆիզիքական և քիմիական կաբինետում՝

Գործիքներ և իրեր արժողութեամբ . 622 ր. 55 կ.
Բնագիտական պատկերն. և մօդէլներ 114 ,, 50 ,,
Աշխարհագրական քարտէզներ . . 116 ,, — ,,
Ընդամէնը 853 ր. 05 կ.

Ցուցակագրւած են և առանձին ժապաւինեալ մատենի մէջ են մտցրւած նաև դպրոցում եղած բոլոր շարժական իրերը, կահ-կարասիքը և այլն։ Այդ իրերի արժողութիւնն է (մօտաւոր.) 1494 ր. 02 կ.։

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ.

Ուսուցչական խումբը 1907—908 ուս. տարում բաղկացած էր 19 հոգուց, որանցից բարձրագոյն ուսում ստացածներ եղել են 4, ճեմարանաւարտներ 4 հոգի, գիմնազիա և ռէալական դպրոցներ 5 (որոնցից մէկը ռուսական համալսարանի II կուրսում, իսկ միւսն աւարտել է արտասահմանի առևտրական դպրոցը), Ներսիսեան դպրոցաւարտներ 3 և միացածը այլ դպրոցներ։

Ուսուցիչներն ունեցել են շաբաթական 4-ից— 24 դաս. մէկը 25 դաս։ Թէ ինչպէս են պարապել ուսուցիչները և որքան դաս են բաց թողել՝ կարելի է տեսնել հետևեալ աղիւսակից.



| №№ | Ուսուցիչների ազգանունները | Շաբաթական դասերի թիւը | Պէտք է պարապ. տար. ընթացք. | Բաց է թողել դասեր | Աւելի է պարապել դասեր | Դրսում պարապել է | Ընդամէնը պարապել է | % բաց թողած դասերի |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տիգրան Ադամալեան . . | 15 | 367 | — | 51 | — | 417 | — |
| 2 | Ա. Բաբայեան . . . . | 4 | 98 | — | 15 | — | 113 | — |
| 3 | Վահան Գաբինեան . . . | 24 | 588 | 79 | | — | 509 | 13,5 % |
| 4 | Յովհ. Թադէոսեան . . . | 22 | 539 | 26 | 1 | — | 514 | 4,7 % |
| 5 | Վարդան Մամաջանեան . | 20 | 490 | 7 | — | — | 483 | 1,4 % |
| 6 | Գալ. Մամիկոնեան . . . | 24 | 516 | 12 | 4 | — | 508 | 1,5 % |
| 7 | Յովհ. Մէժլումեան . . . | 24 | 588 | — | 38 | — | 626 | — |
| 8 | Ն. Յակոբեան . . . . | 20 | 490 | 3 | 2 | — | 489 | — |
| 9 | Արշ. Յովհաննիսեան . . | 6 | 147 | — | — | — | 147 | — |
| 10 | Ս. Շելկովնիկեան . . . | 25 | 612 | 69 | — | — | 543 | 11,0 % |
| 11 | Ք. Պալատա . . . . . | 19 | 465 | 1 | 2 | — | 466 | — |
| 12 | Սմբ. Սմբատեան . . . | 14 | 346 | 40 | — | — | 366 | 11,2 % |
| 13 | Ս. Տէր-Գաբրիէլեան . . | 15 | 367 | 21 | — | — | 346 | 5,6 % |
| 14 | Արշ. Տէր-Մարուգեան . . | 14 | 343 | 7 | 6 | — | 342 | — |
| 15 | Գ. Տէր-Մինասեան . . . | 9 | 220 | 24 | 5 | — | 201 | 8,2 % |
| 16 | Յովհ. Տէր-Միքայէլեան . | 4 | 98 | 9 | 9 | — | 98 | — |
| 17 | Մկրտ. Տէր-Սահակեան . | 12 | 294 | 17 | — | — | 277 | 5,7 % |
| 18 | Մակար. Տէր-Սարգսեան . | 4 | 98 | 10 | — | — | 88 | 10 % |
| 19 | Պատ. Քուշմանեան . . . | 24 | 588 | 14 | 21 | 36 | 595 | — |
| | Ընդամէնը 1907—908 թ. | — | 7254 | 339 | 145 | 36 | 7066 | 2,5 % |
| | 1906—907 ուս. տար. | — | 6887 | 249 | 67 | — | 6705 | 2,7 % |

Համեմատելով այս տարւայ դասերի ընդհանուր թիւը անցեալ տարւայ թւերի հետ, մենք տեսնում ենք, որ այս տարի դասերի թիւը աւելի է եղել անցեալ տարւանից 367 դասով, թէև տարին աւելի ուշ

է սկսել։ Այդ մասամբ բացատրւում է նրանով, որ անցեալ տարի զուգընթացներ ունեցել են նախակրթարանները և I դասարանը, իսկ այս տարի նախակրթարանները և 3 հիմն. դասարաններ, որտեղ դասերի թիւը աւելի է։ Բաց թողած դասերի թիւը այս տարի քիչ աւելի է՝ քան անցեալ տարի. պատճառը գլխաւորապէս հիւանդութիւնն է եղել։ Տարւայ ընթացքում ուսուցիչներից մի քանիսը ունեցել են մի



քանի առարկաներից աւելորդ դասեր, որ աւանդել են ձրի (Ադամալեան, Բուշմանեան, Մէժլումեան)։ Աւելի պարապած դասերի թիւը այս տարի հասնում է 145 և զպրոցից դուրս 36, անհամեմատ աւելի, քան թէ անցեալ տարի։ Եթէ % հաշւելու լինենք, կը տեսնենք, որ այս տարի բաց թողած դասերի թիւը կազմում է 2,5% (187), անցեալ տարի 2,7% (182), որ համեմատաբար փոքր թիւ է։

Դասերն ուսուցիչների մէջ [illegible]ւած էին հետևեալ կերպով.

| Ուսուցիչների ազգանունները | Ինչ առարկաներ են ուսուցել | ՆԱԽԱԿ. | | Դ… ԱՐԱՆՆԵՐ | | | | | | | | | Շաբաթ. դաս. թիւ | ՌՈՃԻԿ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | III ն. | | I դա… | | II դաս. | | III դաս. | | IV | V | VI | | |
| | | Հ. | Ջ. | Հ. | | Հ. | Ջ. | Հ. | Ջ. | Հ. | Հ. | Հ. | | |
| 1. Տիգրան Ադամալեան (աւարտել է Պետեր. անտառ. ճեմ.) | Բնագիտ. | | | | | 2 | 2 | 2 | 2 | 2 | | | | |
| | Ֆիզիկա | | | | | | | | | | | 2 | | |
| | Քիմիա | | | | | | | | | | | 2 | | |
| | Տիեզեր. | | | | | | | | | | | 1 | 15 | 2550 |
| 2. Առաքել Բարայեան | Թւաբ. | | 4 | | | | | | | | | | | |
| | Գրադարանապ. | | | | | | | | | | | | 4 | 420 |
| 3. Վահան Գաբրիեան (լսել է Մոսկ. համալս. պետ. համ. արև. բաժնում և արտասահման) | Հ. պատմ. | | | | | | | | | 2 | 2 | 2 | | |
| | Ընդհ. պատմ. | | | | | | | 2 | 2 | 2 | 2 | 2 | | |
| | Ռ. պատմ. | | | | | | | | | | 2 | 1 | | |
| | Եկ. պատմ. | | | | | | | | | | 1 | | | |
| | Ռ. գրակ. | | | | | | | | | | | 4 | 24 | 1680 |

| Ուսուցիչների ազգանունները | Ինչ՞ առարկաներ են ուսուցել | ՆԱԽԱԿ. III ն. Հ. | ՆԱԽԱԿ. III ն. Ջ. | ԴԱՍԱՐԱՆՆԵՐ I դաս. Հ. | I դաս. Ջ. | II դաս. Հ. | II դաս. Ջ. | III դաս. Հ. | III դաս. Ջ. | IV Հ. | V Հ. | VI Հ. | Շաբաթ. դաս. թիւը | ՌՈՃԻԿ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. Յովհաննէս Թաղէոսեան Գէորգ. ճեմ. | Հայոց լեզու | | | | | | | 5 | 5 | | 6 | 6 | 22 | 1200 |
| | Քարտուղար | | | | | | | | | | | | | |
| 5. Վարդան Մամաջանեան Ներս. դպր. | Ձայնագր. | 2 | 2 | 2 | | 2 | 2 | 2 | 2 | | | | | |
| | Խմբ. | | | | | | | | | | | | 19 | 600 |
| 6. Գ. Մամիկոնեան Ելիս. գիմն. VII դ. | Ռ. լեզու | | | 6 | | | | | | | | | | |
| | Աշխար. | | | 2 | | 3 | 3 | 2 | 2 | | | | 24 | 1020 |
| 7. Յովհ. Մէժլումեան Բագ. ռէալ. դպր. VI դ. և արտաս. ուսեար. դպր. | Թուաբ. | | | | | | | 3 | 3 | | | | | |
| | Հանր. | | | | | | | 2 | 2 | 2 | 2 | 2 | | |
| | Երկրաչափ. | | | | | | | | | 2 | 2 | 2 | | |
| | Ֆիզիկա | | | | | | | | | | 2 | | 24 | 1430 |
| 8. Ներսէս Յակոբեան | Հ. լեզու | | 8 | | | | | | | | | | | |
| | Թուաբ. | | | | | | 4 | | | | | | | |
| | Կրօն | | 2 | | | | | | | | | | | |
| | Աշխ. | | | | | | | | | | | | 20 | 870 |
| 9. Արշ. Յովհաննիսեան Ներս. դպր. | Հ. լեզու | | | 6 | | | | | | | | | 6 | 270 |

| Ուսուցիչների ազգանունները | Ինչ՞ առարկաներ են ուսուցել | ՆԱԽԱԿ. | | | Ա Ր Ա Ն Ն Ե Ր | | | | | | | Շաբաթ. դաս. թիվը | Ռ Ո Ճ Ի Կ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | III դ. | | I դ. | | դաս. | III դաս. | | IV | V | VI | | |
| | | Հ. | Ձ. | Հ. | | Ձ. | Հ. | Ձ. | Հ. | Հ. | Հ. | | |
| 10. Ս. Շելկովնիկեան<br>Մոսկ. համ. իր. բաժ. | Ռուս. լեզու | | | | | 6 | 5 | 5 | 5 | 4 | | 25 | 1500 |
| 11. Բ. Պալատա | Գերմ. | | | | 3 | 3 | 3 | 3 | 3 | 2 | 2 | 15 | 1012—5 |
| 12. Սմբատ Սմբատեան<br>(Ներս. դպր.) | Հ. լեզու<br>Կրօն<br>Թուաբ. | 8<br>2<br>4 | | | | | | | | | | 14 | 610 |
| 13. Սարգիս Տէր-Գաբրիէլեան | Ռուս. ս. գ.<br>Քրիստ. վ.<br>Կրօն | | | | | <br><br>2 | 2 | 2 | 2 | 2<br>1 | 2 | 15 | 600 |
| 14. Ա. Տէր-Մարուքեան գիմնազ. | Ռ. լեզու<br>Վերակ. | 7 | 7 | | | | | | | | | 14 | 920 |
| 15. Գ. Տէր-Մինասեան գիմնազիա | Ռ. լեզու<br>Ռ. աշխ. | | | | | | | | 3 | | | 9 | 720 |

| Ուսուցիչների ազգանունները | Ինչ առարկաներ են ուսուցել | ՆԱԽԱԿ. | | Դ | | Ա Ր Ա Ն Ն Ե Ր | | | | | | Շաբաթ. դաս. թիւ | ՌՌՃԻԿ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | III ն. | | I դ. | | դաս. | III դաս. | | IV | V | VI | | |
| | | Հ. | Ձ. | Հ. | | Ձ. | Հ. | Ձ. | Հ. | Հ. | Հ. | | |
| 16. Յ. Տէր-Միքայէլեան<br>(խարկ. համալս.) | Բնախօս.<br>Առողջապ. | | | | | | | | | 2 | 2 | 4 | 280 |
| 17. Մ. Տէր-Սահակեան<br>(Գէորգ. ճեմ.) | Թուաբ.<br>Կրօն | | | 4<br>2 | | | | | | | | 12 | 530 |
| 18. Մ. Տէր-Սարգսեան<br>(Ներս. դպր.) | Գծագր.<br>Քարտ. | | | 2 | | | | | | | | 4 | 785 |
| 19. Պ. Քուշմանեան<br>(Գէորգ. ճեմ.) | Հայոց լեզու | | | | 6 | 6 | | | 6 | | | 24 | 1200 |
| | | 23 | 23 | 24 | 8 | 28 | 28 | 28 | 29 | 30 | 30 | | 18597,05 |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ։

Մանկավարժական ժողովներ տարւայ ընթացքում եղել են 40. (անցեալ տարի 16)։ Ժողովների գլխաւոր զբաղմունքը եղել է։

Տարւայ սկզբում և մի քանի ժողովներ նւիրւել են վերաքննւողների փոխադրութեան, նորեկների ընդունելութեան, տարւայ վերջը նոյնպէս մի քանի ժողովների նիւթ է եղել աշակերտների փոխադրելու հարցը։

Ժողովի զբաղման առարկայ է դառել տարւայ սկզբում դասերի բաժանման խնդիրը։ Մանկ. ժողովը ցանկանալով հայոց, ռուսաց լեզուները պատշաճ բարձրութեան վրայ դնել, որոշեց այդ առարկաների դասերի թիւը աւելացնել բոլոր դասարաններում, կրճատելով միւս առարկաների դասերի թիւը, ինչպէս աշխարհագրութիւն, նոր հիմունքներով նա որոշեց գերմաներէնը սկսել II դասարանից, յատկացնելով նրան շաբաթական 3 դաս մինչև V-ը, իսկ V և VI-ում թողնել 2 դաս։ Աշխարհագրութեան դասերը դարձնել 2, Հ. աշխարհագրութիւնը 1 դ. և յանձնել այդ առարկայի աւանդելը ընդհ. աշխարհագրութիւն աւանդող ուսուցչին։ Աշխարհագրութեան դասերն սկսւում են իսկապէս III դ.-ից հայրենագիտութիւն անւան տակ։ I դասարանում անցնել Կովկասի աշխարհագրութիւնը աւելի լայն ծրագրով և ապա միւս երկիրները։ Բնագիտութիւնը սկսել 2 դասարանից, վերջացնել V-ում, նւիրելով նրան շաբաթը 2 դաս և 2 դաս առողջապահութիւն մտցընել VI-ում։ Այս տարի առաջին անգամ VI-ում մտցրուեց նաև ռուսաց գրականութիւնը, որև աւանդւել է ամբողջովին։ Գրաւոր աշխատանքները դրւել են աւելի կանոնաւոր հիմունքների վրայ, մտցրւել են պարտաւորեցուցիչ գրաւոր դասարանական աշխատանքներ։



Ծրագրների մշակման խնդիրը զբաղեցրել է Մանկավարժական ժողովի անդամներին բոլորից շատ։

Տարւայ ընթացքում ծրագրները մշակելու համար Մանկ. ժողովը ընտրել է յատուկ մասնաժողովներ, որոնք մշակելով իրանց ծրագիրները՝ ներկայացրել են մանկավարժական ժողովին, որը և կարևոր փոփոխութիւններ մտցնելուց յետոյ հաստատել է։ Մեր ծրագիրը հիմնական փոփոխութեան է ենթարկւել անցեալ տարւանից, բայց փոքրիշատէ մշակւած ծրագիր դպրոցը չունէր։ Այս տարւայ մշակածն էլ իհարկէ զերծ չէ թերութիւններից։ Ցանկանալով մասամբ այդ թերութիւնները լրացնել, մասամբ էլ հնարաւոր եղածին չափ մօտեցնել Կովկասում եղած բոլոր թեմական դպրոցների ծրագիրները, որպէս զի դիւրութիւն տրւի մի դպրոցում սովորող աշակերտներին փոխւել միւսը, Մանկ. ժողովը քանիցս անգամ դիմել է թէ ճեմարանին և թէ միւս թեմական դպրոցների վարչութիւններին, խնդրելով ուղարկել իրանց կազմած ծրագիրները, բայց և ոչ մէկից չի ստացել, բացի Ն. Նախիջևանի դպրոցից։ Մեր ծրագիրը մշակւած է անկախ միւս թեմականների ծրագրներից, նա մօտենում է րէալական գիմնազիաների ծրագրներին, այդ դիւրութիւն կըտայ մեր ընթա-

ցուտրաներին մանել Ռուսաստանի բարձրագոյն դըպրոցները։ Վերջերս միայն ստացուեց Ներս. դպրոցի վարչութիւնից մի գրութիւն, որտեղ յայտնւում էր, որ Ներս. դպրոցը ևս պատրաստում է ծրագրի մի նախագիծ, որը քննութեան պիտի առնուի յունիս ամսին Թեմական դպրոցի գումարուելիք համագումարին։

Մանկավարժական խորհրդի առանձին ուշադրութեան առարկայ է եղել նաև մեր աշակերտների նիւթական անմխիթար կացութիւնը։ Այդ նպատակով Մանկ. խորհրդի անդամների նախաձեռնութեամբ մշակուել է «Հայրիկեան» անունով ընկերութեան ծրագրի մի նախագիծ, որը իշխանութեան կողմից հաստատուելուց յետոյ կսկսի իր գործունէութիւնը։ Բացի այդ Մանկավարժական խորհուրդը իր տրամադրութեան տակ եղած գումարներից բաժին է հանել իրան դիմող չքաւոր աշակերտներին, տալով նրանց ամսական և միանուագ նպաստներ, հագուստ և դասական պիտոյքներ։ Նպաստել է նաև աշակերտների կողմից սարքած ներկայացման նոյն նպատակի համար, թողնելով այդ գումարի գործադրութիւնը աշակերտներին։

Մանկ. խորհրդի պարապմունքների առարկայ են եղել նաև մի շարք այլ խնդիրներ, ինչպէս.—

Հանդէսների կազմելը, դիսցիպլինային վերաբերեալ զանազան խնդիրներ, աշակերտների գրադարանից օգտուելու հարցը և այլն. դրա համար ուսուցիչները կազմել են դասարանական առանձին ցուցակներ, որոնցից և օգտուել են աշակերտները։ Աւելի



կանոնաւոր տանելու համար ընթերցանութիւնը, առաջարկուել է դաստիարակներին ունենալ առանձին կոլլեկտիւ ընթերցանութիւններ դասերից դուրս. այդ տեսակ ընթերցանութիւններ ունեցել են Պ.պ. Մէժլումեան և Քուշմանեան։

# 1907-908 Թ.

| | Մուտքի տեսակներ | Նախահաշիւ ր. | կ. | Իսկական ր. | կ. | Տարբերութիւն ր. | կ. | Ինչ ժամանակի ընթացքում Ամիսներ | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մնացորդ առ 1 Սեպտեմ. | 1443 | 71 | 1443 | 71 | — | — | Մնացել . | 1443 | 70 |
| 2 | Կոնսիստորիայից . . . | 4000 | — | 5480 | 95 | +1480 | 95 | Սեպտեմբերին | 2128 | 41 |
| 3 | Մամակաճառութիւնից . | 5500 | — | 5021 | 92 | —478 | 08 | Հոկտ. և Նոյեմ. | 5833 | 84 |
| 4 | Սրբատեղերից . . . | 150 | — | 30 | — | —120 | — | Դեկտեմբերին | 1862 | 25 |
| 5 | Թոշակներից . . . . | 3000 | — | 2924 | — | —76 | — | Յունուարին | 4308 | 10 |
| 6 | Տ. Աֆրիկեանի նպաստ. | 1000 | — | 1000 | — | — | — | Փետրուարին | 1812 | 26 |
| 7 | Անշարժ կայքերից . . | 1398 | — | 459 | 33 | —938 | 67 | Մարտին . . | 1781 | 55 |
| 8 | Նպաստներ . . . . | 150 | — | — | — | — | — | Ապրիլին . . | 1575 | 71 |
| 9 | 0/0 0/0 Թայիրեանի կտակի | 4800 | — | 5731 | 33 | +931 | 33 | Մայիսին . . | 3800 | 05 |
| 10 | Հրատ. Ընկ. գրքերից . | 500 | — | 379 | 67 | —120 | 33 | Յունիսին . | — | — |
| 13 | Ներքին փոխառութիւն | — | — | 7200* | — | —7200 | — | | | |
| 14 | Նոյնպէս . . . . . | — | — | — | — | — | — | | | |
| 15 | Պատահական նպաստներ | — | — | 90 | 30 | —90 | 30 | | | |
| 16 | Կառավ. գրաւած գում. | — | — | — | — | — | — | | | |
| 17 | Վառելիքից . . . . | — | — | — | — | — | — | | | |
| 18 | Գանձապ. վերց. պարտք | — | — | — | — | — | — | | | |
| | | 30281 | 71 | 31622 | 21 | — | — | | 31622 | 21 |

*) ԾԱՆՕԹ. Փոխառութիւնը 7200 ր. առաջ է եկել հետևեալ հանգամանքներից,— ա) նախահաշուի մէջ չէր նախատեսնուած դպրոցի նորոգութեան ծախսը 1824 ր., բ) հին հոգաբարձութեան հաշուին վճարած է ուսուցիչների ռոճիկ և տան յետ գնելու լրացուցիչ վճարը ընդամէնը 3053 ր. 51 կ., որպիսի գումարից դուրս գալով հին հոգաբարձութիւնից ստացած պատրաստի դրամը 1102 ր. 98 կ., աւելորդ ծախսել է 1950 ր. 53 կ., բացի դրանից ունենք պատրաստի մամ ոչ պակաս 1500 ր. արժողութ., ընդամէնը նախատեսնուած աւելորդ ծախք 5274 ր. 53 կ.

# 1907-908 թ.

| | Ելքի տեսակներ | Նախահաշւով |  | Իսկական |  | Տարբերութիւն |  | Ինչ ժամանակի ընթացքում |  |  |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ամիսներ | Ր. | Կ. |
| 1 | Տեաչի և ուսուցչաց ռոճ. | 18324 | 60 | 18549 | 40 | +224 | 80 | Սեպտեմբերին | 2415 | 87 |
| 2 | Ծառաներին . . . . | 720 | — | 644 | 80 | —75 | 20 | Հոկտ. և Նոյեմ. | 6711 | 91 |
| 3 | Տների վարձ . . . . | 830 | — | 780 | — | —50 | — | Դեկտեմբերին | 1953 | 46 |
| 4 | Պարբեր. հրատար. և այլն | 380 | — | 422 | 38 | +42 | 38 | Յունուարին . | 2451 | 44 |
| 5 | Դպրոցի նորոգութեան . | 1000 | — | 1750* | 67 | +750 | 67 | Փետրուարին | 2553 | 72 |
| 6 | Վառելիքի . . . . . | 270 | — | 304 | 15 | +34 | 15 | Մարտին . . | 1795 | 49 |
| 7 | Ֆիզիք. կաբինետի . . | 400 | — | 421 | 28 | +21 | 28 | Ապրիլին . . | 2674 | 68 |
| 8 | Ուսումն. պիտույք. և կայք | 150 | — | 273 | 18 | +123 | 18 | Մայիսին . . | 3881 | 77 |
| 9 | Գաւառական հոգաբարձ. | — | — | — | — | — | — | Յունիսին . | | — |
| 10 | Ղարաք. գ. և Երևանի գիմ. | 2000 | — | 1501 | 20 | —498 | 80 | Յուլիսին . . | 2063 | 88 |
| 11 | Բժշկի ծախս . . . . | 80 | | 80 | — | — | | Օգոստոսին . | 3916 | 47 |
| 12 | Պատահական ծախսեր | 200 | | 136 | 58 | —63 | 42 | Մնացեալ . | 1203 | 52 |
| 13 | Արամեկեկեանի հոգեհ. . | 50 | | 50 | | — | | | | |
| 14 | [illegible] | 116 | 12 | 56 | 53 | —59 | 89 | | | |
| 17 | Մամի վճարած . . . | 3700 | — | 2863 | 71 | —836 | 29 | | | |
| 18 | Անսպասելի ծախսեր . | 200 | — | 393 | 35 | +193 | 35 | | | |
| 19 | Ջրաղացի նորոգութեան | 100 | — | | — | — | | | | |
| 20 | Իրաւաբանի ծախք . . | — | — | — | — | — | | | | |
| 21 | Կենսաթոշակ Պալեանի . | — | — | — | — | — | | | | |
| 22 | Պարապ Մելիք-Ադամալ. | | | — | | — | | | | |
| 23 | Կալուծոց գործակ. ռոճ. | 390 | — | 300 | — | —90 | | | | |
| 24 | Նախկ. տար. պարտք վճ. | — | — | — | — | — | | | | |
| 25 | Դպրոցապատ. տ. գր. ադ. | — | — | — | — | — | | | | |
| 26 | Պատրաստի դրամարկղ. | — | — | 1203 | 52 | | | | | |
| | | 30154 | 20 | 31622 | 21 | — | — | | 31622 | 21 |

*) Դպրանոցի նորոգութեան ծախքի աւելորդը գործադրուած է ներկայ սեպհական շինութեան վրայ, որովհետև Այգիեանի և Վարդանեանի տների անձկութեան պատճառով անհնար եղաւ եղած դասարաններում թէ՛ հին աշակերտներին տեղաւորել և թէ՛ 200 նոր ընդունուածներին բաւականութիւն տալ, ուստի հարկ եղաւ փոխադրել դպրանոցի ներկայ սեպհական շինութիւնը՝ կատարելապէս նորոգելով այն, մանաւանդ, որ այդ շինութիւնը առանց այն էլ որոշուած էր վերանորոգել վարձով տալու համար։

Հերթապահ Հոգաբարձու Յ. Օհանեանց

Անդամք
Կարապետ Կամսարական
Ս. Մելիքեանց
Յովսէփ Աւդուբեանց
Գ. Ամիրեանց

ՀՀ Ազգային գրադարան
NL0226185

51. 311